ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի տնօրինության մանկապարտեզներ հանդիսացող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքից հետ վերցնել և անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրել իրենց կողմից զբաղեցրած տարածները՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի ենթակայության «Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի և «Երևանի Մալաթիա-Սեբաստիա շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի զբաղեցրած տարածքների նկատմամբ ձևակերպել ՀՈԱԿ-ների օգտագործման իրավունքը:

Նշված ՀՈԱԿ-ները տեղակայված են Վրացյան փողոցի հ.80 հասցեում գտնվող «Երևանի հ.3 մանկապարտեզ» և Հ/Ա Բ-2 թաղամասում գտնվող «Երևանի հ.82 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներին ամրացված տարածքներում:

Հարկ է նշել, որ Վրացյան փողոցի հ.80 և Հ/Ա Բ-2 թաղամասում գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերը և դրանց զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը հանդիսանում են Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ 18.11.2010թ. հ.2791011, 21.07.2011թ. հ.2768334 վկայականներ):

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի պահանջները տարածվում են նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վրա:

Հաշվի առնելով շախմատի բարերար ազդեցությունը երեխաների մտքի ճկունության զարգացման հարցում, ինչպես նաև կարևորելով շախմատի դպրոցների անհրաժեշտությունը առաջարկվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, սույն որոշմանը կից հավելվածում ընդգրկված տարածքներն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով համապատասխանաբար տրամադրել նույն հավելվածում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու

,,____,, _____2016թ.

Հ. _____-Ա Որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպու-թյան անվանումը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական	Համայնքային ոչ առևտրային կազմակերպու-թյան անվանումը	Համայնքային ոչ առևտրային կազմակերպու-թյան գտնվելու վայրը	Անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող տարածքի մակերեսը (քառ. մետր)	Անշարժ գույքի գնահատված արժեքը՝ ըստ գնահատման վերաբերյալ հաշվետվության (ՀՀ դրամ)
1	2	3		4	5	6	7
1	«Երևանի հ.3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Վրացյան փողոց հ.80	14.04.2016թ. Հ.14042016-01-0127	«Երևանի Կենտրոնի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	Վրացյան փողոց հ.80	251.49	95 000 000
2	«Երևանի հ.82 մանկապարտեզ» ՀՈԱԿ	Հ/Ա Բ-2 թաղամաս	11.05.2016թ. Հ.11052016-01-0177	«Երևանի Մալաթիա-Սեբաստիա շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	Հ/Ա Բ-2 թաղամաս	667.27	70 000 000